

# Վայացավ քաղաքացիների մայիս ամսվա ընդունելությունը

15.05.2018



2018 թվականի մայիսի 11-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության համար նախապես ցուցակագրվել էր 92 քաղաքացի, ընդունելության էին եկել 103-ը: Ընդունելության եկած բոլոր քաղաքացիները դիմել էին դրամական աջակցության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվել է:

Մեկ քաղաքացի դիմել էր նաև աշխատանքի տեղավորման խնդրանքով: Քաղաքացու խնդրանքը բավարարելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հանձնարարություն է տվել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարին: Հարցը գտնվում է լուծման փուլում: